# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 23 - 24 (16418) ՇԱԲԱԹ, 26 ՄԱՐՏԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

*Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով, մարտի 24-25-ին պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն:*



Մարտի 25-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեին:

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը հույս հայտնեց, որ այցը նոր խթան կհանդիսանա հայ-վրացական երկկողմ բարեկամական հարաբերությունների

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ ԹՈՒՅԼ ԿՏԱ ԵՐԿՐԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑՆԵԼ»




*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, հանդես գալով դոնորների համակարգման ամենամյա գագաթաժողովին, հայտարարեց, որ գործադիրը մշակել է երկրի զարգացման չորս կետից բաղկացած ծրագիր եւ ներկայացրել տնտեսական զարգացման առաջնահերթությունները:*

Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, ներկա դրությամբ, դոնոր երկրների, միջազգային կազմակերպությունների եւ ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորվում է երկրում իրականացվող ավելի քան 400 նախագիծ, ընդհանուր գումարը գերազանցում է 6 միլիարդ լարիին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

*Մարտի 21-22-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Եվրամիության առեւտրի հարցերով եվրակոմիսար Սեսիլիա Մալմստրեմը: Այցի շրջանակներում, եվրակոմիսարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, պաշտոնական այլ անձանց հետ:*



Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ առեւտրի հարցերով եվրակոմիսար Սեսիլիա Մալմստրեմի հանդիպմանը կողմերը քննարկեցին Եվրամիությանը Վրաստանի ինտեգրման, այցեգրերի ազատականացման հետ առնչվող հարցեր:

Գիորգի Մարգվելաշվիլին, Վրաստանին ցուցաբերած բացառիկ աջակցության եւ Վրաստանի ու Եվրամիության միջեւ համագործակցության զարգացման գործում ներդրած անձնական ավանդի համար, առեւտրի հարցերով եվրակոմիսար Սեսիլիա Մալմստ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



*Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Սաուդյան Արաբիայում: Այցի շրջանակներում, Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Սաուդյան Արաբիայի թագավոր Սալման Բին Աբդուլազիս Ալ-Սաուդի հետ:*

Թագավորը այցի համար շնորհակալություն հայտնեց խորհրդարանի խոսնակին եւ նշեց, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները վերջին ժամանակ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ՄԱՐՏԻ 27-Ը՝ ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

## «ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ, ՕՐՀՆՅԱԼ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ»




Զատիկ. այսպես է կոչվում Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը:

Զատիկ նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված:

Զատկի տոնին հավատացյալները ձու են ներկում: Ձուն համարվում է հարության եւ նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշ: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար:

Սուրբ Հարության տոնի նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի Սուրբ պատարագ, որով սկսվում են զատկական տոնակատարությունները: Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա մատուցվում Սուրբ պատարագ:

Սուրբ Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով, պատասխանում՝ «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»:

## «ԾԱՂԿԱԶԱՐԴԸ»՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

*2016 թվականի մարտի 20-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին նշեց «Ծաղկազարդը»՝ Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ:*



Առավոտից մարդաշատ էին Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիների բակն ու շուրջբոլորը:

Առավոտյան ժամերգությունից հետո, մատուցվեց Սուրբ եւ Անմահ պատարագ: Սուրբ Գեւորգ եկեղեցում պատարագիչը Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն էր, իսկ Սուրբ Էջմիածին եկեղեցում՝ Քվեմո Քարթլիի հայկական համայնքների հոգեւոր հովիվ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը:

Երկու եկեղեցիներում էլ, հընթացս պատարագի, հավուր պատշաճի քարոզ խոսվեց «Ծաղկազարդի» խորհրդի ու տոնի հոգեւոր պատգամի, ինչպես եւ խոսվեց Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին մի քանի դրվագների մասին:

«Ծաղկազարդը» տարիներ առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից հռչակվել է մանուկների օրհնության օր:

Հավարտ Սուրբ պատարագի, քահանա հայրերի կողմից կատարվեց մանուկների օրհնության կարգ:

«Ծաղկազարդը» մեծ շուքով նշվեց նաեւ Բաթումիի, Ախալքալաքի, Նինոծմինդայի, Վրաստանի հայաբնակ մյուս վայրերի եկեղեցիներում:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

## ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ՈՒԺԻ ՄԵՋ ԿՄՏՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

*Վրաստանի բիզնես-ասոցիացիաների հետ հանդիպմանը ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ շահութահարկի բարեփոխումն ուժի մեջ կմտնի 2017 թվականի հունվարի 1-ից, իսկ ֆինանսական հատվածի վրա այն կտարածվի 2019 թվականի հունվարի 1-ից:*

Նրա խոսքերով, գործարար շրջանների հետ խորհրդատվության շնորհիվ ընդունվեց օրենսդրական փոփոխության վերջնական տարբերակը, որն էլ առաքվել է խորհրդարանին: Նա օրենսդիր մարմնին խնդրեց առավելա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ ԹՈՒՅԼ ԿՏԱ ԵՐԿՐԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑՆԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Վրաստանի համար ձեր աջակցությունն անգնահատելի է: Այն նշանակալիորեն նպաստում է եվրոպական մեծ ընտանիք մեր վերադարձին, որտեղ պահպանված են մարդու իրավունքներն ու օրենքի գերակայությունը եւ ներկայացնում են գլխավոր արժեքները»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

Վարչապետի խոսքերով, կառավարության կողմից ներկայացված քառակետ ծրագիրը նախատեսում է նաեւ կրթական բարեփոխումը, մասնավորապես՝ մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումը: «Համոզված ենք, որ մեր ծրագիրը ուղղված է էկոնոմիկայի ամրապնդմանը, աշխատանքային շուկայի պահանջներին կողմնորոշված կրթական համակարգի, արդի պահանջներին համապատասխանող ենթակառույցների ստեղծմանը, պետական կառավարման ճկունության ապահովմանը, որը թույլ կտա զարգացման նոր փուլի անցնել:

Բարեփոխումների առաջին բլոկը առնչվում է կրթությանը: Այն նախատեսում է բացարձակապես նոր մոդել մասնագիտական կրթության համար, այն նախատեսում է նոր համակարգի հիմնում, որը հիմնված կլինի մասնավոր եւ պետական հատվածների գործընկերության վրա: Դա նշանակում է առավել շատ որակյալ, մրցունակ արհեստավարժներ եւ ավելի շատ աշխատատեղ»,- հայտարարեց վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ռեժմին պարգեւատրեց Պատվո շքանշանով:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ առեւտրի հարցերով եվրակոմիսար Սեսիլիա Մարլմստրեմի հանդիպմանը քննարկվեցին Եվրամիության հետ ինտեգրման ու այցեգրերի ազատականացման հետ առնչվող հարցերը: Հանդիպմանը կողմերը խոսեցին Ասոցիացման համաձայնագրով նախատեսված հարցերի վերաբերյալ, անդրադարձան ազատ եւ համընդգրկուն առեւտրի հաստատման հարցին: Առանձնակի ուշադրություն հատկացվեց Եվրամիության հետ տնտեսական ինտեգրման աջակցությանը: Վարչապետի մոտ հանդիպմանը ներկա էին նաեւ Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին, Վրաստանում Եվրամիության առաքելության ղեկավար Նատալի Սաբանիձեն ու Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Յանոշ Հերմանը:



ՎՐԱՍՏԱՆ-ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներում ինտենսիվորեն զարգանում են: Հանդիպմանը կողմերը քննարկեցին առաջիկա համագործակցության հեռանկարները, ընդգծվեց տնտեսական, գործարարության եւ զբոսաշրջության ոլորտներում համագործակցության խորացման կարեւորությունը:

Կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանում ընթացող իրադարձությունները: Սաուդյան Արաբիայի թագավորը հանդիպման ժամանակ հայտարարեց, որ իր երկիրը պաշտպանում է ՄԱԿ-ի բանաձեւը, որն առնչվում է Աբխազիայից եւ Ցխինվալիի տարածաշրջանից փախստականներին ու բռնագաղթվածներին:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Վրաստանի խորհրդարանի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն, ինչպես նաեւ Սաուդյան Արաբիայի ներքին գործերի, արտաքին գործերի նախարարները, երկրի խորհրդարանի նախագահը, պաշտոնական այլ անձինք:

ԿՐԹԱԿԱՆ

# ՕՐԵՆՔԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՓՈԽՎԵԼ՝ ՀՕԳՈՒՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ



***Վրաստանի կրթության նախարարության կողմից տարածված հաղորդագրության մեջ նշված է, որ գերատեսչությունը, ելնելով Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ուսանողների առաջարկություններից, պատրաստ է փոփոխություններ կատարել «Բարձրագույն կրթության մասին» օրենքում:***

Հիշեցնենք, որ համալսարանի ուսանողները մարտի սկզբին բողոքի ցույց անցկացրին՝ պահանջելով բուհը ազատել հատուկ ծառայությունների վերահսկողությունից եւ անցկացնել ուսանողական ինքնակառավարման բարեփոխում: Այդ կապակցությամբ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին նախարարությանը հանձնարարել էր, հաշվի առնել կրթական համակարգի բարեփոխման գործում ուսանողների կարծիքը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, գերատեսչության եւ ուսանողների ներկայացուցիչները մտքեր փոխանակեցին օրենսդրական փոփոխությունների մասին, համաձայնեցրին այն սկզբունքները, որոնք դրվելու են օրենսդրական փոփոխությունների հիմքում: Փոփոխությունները առնչվում են ինքնակառավարման համակարգին:

Նշենք, որ համալսարանի ուսանողները ներկա դրությամբ, բաժանված են երկու ճամբարների՝ գործող ուսանողական ինքնակառավարման եւ «Լսարան-115» ուսանողական շարժման: Վերջինս հանդես է գալիս ուսանողական ինքնակառավարման գործառույթների կրճատման օգտին: Դրա ներկայացուցիչները բարձր գնահատեցին նախարարության առաջարկությունը, իսկ ուսանողական ինքնակառավարումը, որը հանդես է գալիս համալսարանի ռեկտոր Վլադիմիր Պապավայի պաշտոնաթողության նախաձեռնությամբ, գերատեսչության առաջարկության մեջ նոր ոչինչ չի տեսնում:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խորացման գործում:

Հայաստանի նախագահը եւ Վրաստանի արտգործնախարարը համակարծիք էին, որ Վրաստանն ու Հայաստանը՝ ներգրավված լինելով տարբեր ինտեգրացիոն գործընթացներում՝ Հայաստանն անդամակցելով ԵԱՏՄ-ին, իսկ Վրաստանը ստորագրելով ԵՄ-ի հետ Ասոցիացման համաձայնագիրը, մեծ ներուժ ունեն զարգացնելու համագործակցությունը նաեւ այդ գործընթացների շրջանակներում կուտակած փորձի փոխանակման, համատեղ ծրագրերի իրագործման առումով: Կողմերի համոզմամբ, դա որակապես նոր մակարդակի կբարձրացնի հայ-վրացական հարաբերությունները:

Սերժ Սարգսյանը եւ Միխեիլ Ջանելիձեն կարեւորեցին նաեւ երկու պետությունների կողմից՝ միմյանց համար սկզբունքային նշանակություն ունեցող զգայուն հարցերի նկատմամբ հավասարակշռված եւ փոխադարձ շահերի հարգման վրա հիմնված քաղաքականությունը, միջազգային կազմակերպությունների շրջանակներում հայ-վրացական արդյունավետ համագործակցությունը:

Հանդիպմանն անդրադարձ եղավ տարածաշրջանային անվտանգությանը, առկա խնդիրներին եւ մարտահրավերներին, ԼՂ հակամարտության խաղաղ ճանապարհով կարգավորման բանակցային գործընթացին:

Հանդիպմանը ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը եւ Հայաստանում Վրաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Մալխազ Մալաշխիան:

Միխեիլ Ջանելիձեն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Այցի շրջանակներում, տեղի ունեցավ նաեւ Միխեիլ Ջանելիձեի եւ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի ու արտաքին գործերի նախագահ Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը:



ԱՄՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑ ԿՈՒԲԱ

*Մարտի 20-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման պաշտոնական այցով եղավ Կուբայում: Դա ԱՄՆ նախագահների կողմից, գրեթե 90-ամյա ընդմիջումից հետո, առաջին այցն էր Ազատության կղզի:*

*Օբաման Կուբա ժամանեց ընտանիքի եւ չորս տասնյակ կոնգրեսականների ուղեկցությամբ: Կղզում գտնվելու ընթացքում ԱՄՆ-ի նախագահը, ի թիվս այլ միջոցառումների, հարգանքի տուրք մատուցեց Կուբայի ազգային հերոս Խոսե Մարտիի հիշատակին, բանակցություններ վարեց Ռաուլ Կաստրոյի հետ: Հանդիպմանը երկու ղեկավարները քննարկեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր եւ համագործակցությունը զարգացնելու մտադրություն հայտնեցին Այցի ընթացքում կողմերը սկզբունքային կարեւորություն ունեցող ոչ մի համաձայնագիր չեն ստորագրել:*

ԲԵԼԳԻԱ

## ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

*«Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումն ստանձնել է ահաբեկչական այն գործողությունների պատասխանատվությունը, որոնք Բրյուսելում տեղի ունեցան մարտի 22-ին:*

*Երեք պայթյուն որոտաց Բրյուսելի միջազգային օդանավակայանում, Մալբեկ թաղամասում գտնվող մետրոյի կայարանում, իսկ չորրորդ պայթյունը տեղի ունեցավ Եվրախորհրդարանի մոտակայքում: Բրյուսելում կատարված ահաբեկչական գործողությունների հետեւանքով, զոհվել է 31 մարդ, վիրավորվել՝ շուրջ 300 հոգի, որոնցից 150-ը դեռեւս գտնվում են հիվանդանոցում: Պայթյունները իրականացրել են մահապարտներ Բրահիմ եւ Հալիդ Բաքրաուին եղբայրները եւ Բելգիայի քաղաքացի Նաջիմ Լահրաուին:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՊԱՅԹՅՈՒՆ՝ ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

*Ստամբուլի կենտրոնական Բեյօղլու թաղամասի Իսթիքլալ պողոտայի հետ հատվող Բալո փողոցում մարտի 19-ին տեղի ունեցավ ահաբեկչական պայթյուն: Պայթյունի արդյունքում զոհվել է 7 մարդ, վիրավորվել՝ 36-ը: Նրանցից 7-ի վիճակը ծանր է: Տուժածների մեջ կա 12 արտասահմանցի:*

*Թուրքական իշխանությունները հայտարարել են, որ ենթադրաբար Ստամբուլի պայթյունն իրագործել է քրդական խմբավորումների հետ կապ ունեցած անձը: Նման ահաբեկչական գործողություն մարտի 13-ին տեղի էր ունեցել Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում, որի արդյունքում, 37 մարդ է զոհվել, վիրավորվել՝ 125 մարդ:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ԱՎԻԱԱՂԵՏ՝ ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎՈՒՄ

*Մարտի 19-ին Դոնի Ռոստովի օդանավակայանում կրկնական վայրէջքամուտի ժամանակ բարդ օդրեւութաբանական պայմաններում (ուժեղ կողմնային քամի եւ անձրեւ) աղետի է ենթարկվել FlyDubai ավիաընկերության Boeing 737-800 ինքնաթիռը, որը կատարում էր FZ 981 չվերթը Դուբայից: Ինքնաթիռում եղել է 62 մարդ: Նրանք բոլորը զոհվել են:*

## ՆԱԴԵԺԴԱ ՍԱՎՉԵՆԿՈՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԵՑ 22 ՏԱՐՈՎ

*ՌԴ Ռոստովի մարզի Դոնեցկի քաղաքային դատարանը ուկրաինուհի նախկին զինծառայող Նադեժդա Սավչենկոյին դատապարտեց 22 տարվա ազատազրկման, ընդհանուր ռեժիմի գաղութում եւ տուգանեց 30 հազար ռուբլու չափով:*

*Սավչենկոն չի ճանաչում դատավճիռը, բայց այն չի բողոքարկելու:*

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

# ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ՈՒԺԻ ՄԵՋ ԿՄՏՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



գույնս արագացված ժամկետներում ընդունեն ներկայացված նախագիծը:

Ինչպես հայտարարեց նախարարը, ծրագրված փոփոխությունները կներդրվեն երեք փուլով: Առաջին փուլում բարեփոխումը կառնչվի արժեքի ավելացրած հարկին (ԱԱՀ), այսինքն՝ արտադրության հիմնական միջոցների ներկրման վրա վերոնշյալ հարկը կվերացվի: Վերոնշյալ փոփոխությունը ուժի մեջ կմտնի օրինանախագծի ընդունումից անմիջապես հետո: Երկրորդ փուլում տեղի կունենա շահութահարկի շահույթի բաշխման հարկի փոփոխությունը, ինչը ուժի մեջ կմտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Նախարարի հավաստմամբ, վերոնշյալ փոփոխությունը ֆինանսական հատվածի վրա կտարածվի 2019 թվականի հունվարի 1-ից, այսինքն՝ առաջիկա երկու տարվա ընթացքում ֆինանսական հատվածը կշարունակի գործել հարկադրման նախորդ պայմանակարգով:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ՊԱԱՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻՆ ԲԱՑԱՌՈՒՄ Է ԿԱՐԱՍԻՆ-ԱԲԱՇԻՁԵ ՁԵՎԱՉԱՓԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ



***Ինչպես հայտարարեց հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին, Կարասին-Աբաշիձե ձեւաչափը չպետք է վերանայվի:***

Պետնախարարի հայտարարությամբ, Կարասին-Աբաշիձե հանդիպումներն այն ձեւաչափն է, որի շրջանակներում, վրաց-ռուսական դիմակայության հարցերից բացի, քննարկվում են նաեւ այլ հիմնախնդիրներ: «Պե՞տք է, արդյոք, վերանայել Աբաշիձե-Կարասին ձեւաչափը: Բացառված է: Ընդհակառակը, միշտ, երբ սրվում է իրավիճակը, ստեղծվում են որոշակի կառույցներ, որտեղ մարդիկ միմյանց հետ անմիջականորեն շփվում են: Կարասին-Աբաշիձե ձեւաչափը գոյություն ունի, քանի որ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունները բացակայում են: Դրանք չեն կարող լինել մինչեւ այն պահը, քանի դեռ Ռուսաստանը չի վերացնի ճանաչման քաղաքականությունը: Այդ ձեւաչափում, դիմակայություններից բացի, քննարկվում են նաեւ այլ հարցեր, եւ որքան բարդ ու լարված է իրավիճակը, այնքան առավել անհրաժեշտ են երկկողմ հարաբերությունները»,- հայտարարեց Պաատա Զաքարեիշվիլին:

# ԳԻԱ ՎՈԼՍԿԻ. «ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՎԵԼ»

***Ինչպես հայտարարեց «Վրացական երազանք» խորհրդարանական խմբակցության նախագահ Գիա Վոլսկին, ԵԱՀԿ խորհրդարանական պատվիրակությունը խնդրանքով դիմել է վրացական կողմին, հնարավորություն ընձեռելով ԵԱՀԿ խորհրդարանական ասամբլեայի Թբիլիսիում անցկացվելիք նիստին, ռուսական պատվիրակության մասնակցության ապահովման հարցով: Գիա Վոլսկու խոսքերով, բացառված չէ, որ ռուսական պատվիրակության առանձին անդամները խախտել են բռնազավթված տարածքների մասին Վրաստանի օրենքը:***



Ելնելով դրանից՝ խորհրդարանականը չի բացառում, որ օրենքում կկատարվեն որոշակի փոփոխություններ, եւ կարվեն առանձին բացառություններ:

Իր հերթին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին, լրիվությամբ բացառում է մինչեւ Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը «Բռնազավթված տարածքների մասին» օրենքի վերացումը, թեպետ ինքն արդարացված է համարում Վրաստանի խորհրդարանում վերոնշյալ օրենքում փոփոխություններ կատարելու հարցը՝ հաշվի առնելով ԵԱՀԿ դիմումը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ



***Մարտի 23-ին Վրաստանի բնապահպանության եւ բնական պաշարների նախարար Գիգլա Ագուլաշվիլին այցելեց Սամցխե-Ջավախեթի եւ տարածաշրջանի նահանգապետի ու տեղական իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպում ունեցավ տեղի բնակիչների հետ:***

Բորժոմիում կայացած հանդիպումը անցկացվեց ինտերակտիվ կարգով: Կողմերը քննարկեցին բնապահպանության հրատապ հարցերը եւ առկա հիմնախնդիրների լուծման ուղիները: Քննարկման հիմնական թեմաներն էին օգտակար հանածոների օգտագործման կարգավորման եւ անտառահատումների հարցը, ինչպես նաեւ սղոցարաններ տանող ճանապարհների վիճակը ու սոցիալական անտառահատման ընթացակարգի դյուրացումը:

Նմանօրինակ հանդիպումներ Գիգլա Ագուլաշվիլին ծրագրում է անցկացնել նաեւ մյուս տարածաշրջաններում:

ՊԱՏԱՀԱՐ

# ՀՐԴԵՀ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

***Մարտի 20-ին հրդեհը Սուրբ Երրորդության Մայր տաճարում (Սամեբա) սկսվեց կիրակնօրյա քարոզից հետո. այրվեց շուրջ 1200 քառակուսի մետր մակերեսով տարածք:***



Հրդեհն սկսվեց երիտասարդական կենտրոնի օժանդակ շինություններից մեկում, որտեղ պահպանվում են գրքեր, գրասենյակային պիտույքներ, ինչպես նաեւ հագուստներ եւ բարեգործության համար նախատեսված առարկաներ:

Հրդեհի բռնկման պահին տաճարը բազմամարդ է եղել. դրանից մեկ ժամ առաջ այստեղ ծիսակատարություն է անցկացրել Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը: Սակայն, մարդկանց ժամանակին տարհանել են: Վնասվածքներ է ստացել եկեղեցու սպասավորներից մեկը, որին հոսպիտալացնելու հարկ չի եղել:

Վրաստանի իշխանությունները բոլոր ջանքերը կներդնեն, որպեսզի վերացնեն Սուրբ Երրորդության Մայր տաճարում բռնկված հրդեհի հետեւանքները: Այդ մասին երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց այն բանից հետո, երբ տեղում ծանոթացավ պատահածի հետ:

Հետաքննություն է անցկացվում՝ պարզելու հրդեհի ծագման պատճառները, հայտնել են Վրաստանի վարչապետի մամուլի ծառայությունից:



## ԻԼԻԱ II. ՑՄԱՀ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿՈՉ



*Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմիններին կոչ արեց վերանայել ցմահ բանտարկության օրենքը: Ինչպես հայտարարեց Պատրիարքը, երկրի խորհրդարանը պետք է մտածի այն մասին, որ աշխարհում անժամկետ ոչինչ չկա, եւ անսահման է միայն Աստված: «Մեզ մոտ կան ցմահ բանտարկյալներ, նրանք կորցրել են ընտանիք, հարազատ վայրեր վերադառնալու հույսը: Այս կամ այն բանտարկյալը, որ կանգնած է ճիշտ ուղու վրա, աշխատում է եւ բարի գործ է կատարում, իրավունք ունի հուսալ, որ ցմահ բանտարկությունը նրա համար կփոխվի»,- հայտարարեց Պատրիարքը:*

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՆՈՎՐՈՒԶ ԲԱՅՐԱՄԻ ԱՌԻԹՈՎ

*Մարտի 21-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Մառնեուլիում տեղի ադրբեջանցիներին շնորհավորեցին Նովրուզ Բայրամի կապակցությամբ: Տոնի առթիվ խարույկ վառելու արտոնությունը վերապահվեց պատվավոր հյուրերին՝ Գիորգի Մարգվելաշվիլուն եւ Գիորգի Կվիրիկաշվիլուն:*

## ԵՐԿՐՈՒՄ ԽՍՏԱՑՎԵԼ Է ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

*Ինչպես հայտարարեց պետական անվտանգության ծառայության հասարակության հետ կապի պետ Նինո Գիորգոբիանին, Բրյուսելում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո, Վրաստանի օդանավակայաններում եւ սահմանագծում վերահսկողությունը խստացվել է: «Տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո, Վրաստանում ձեռնարկվել են անվտանգության միջոցառումներ, մասնավորապես, խստացվել է վերահսկողությունը Վրաստանի օդանավակայաններում ու սահմանագծում: Խստացվել է նաեւ վերահսկողությունը ռազմավարական նշանակության բոլոր օբյեկտներում»,- հայտարարեց Գիորգոբիանին:*

*Իր հերթին, ՆԳ նախարարությունը տարածել է հայտարարություն, ըստ որի, պարեկային ոստիկանությունը առավելագույնս կվերահսկի բնակչության ինտենսիվ տեղաշարժման եւ հասարակական հետաքրքրություն ներկայացնող վայրերը:*

## ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ԿԳԱԶԻՖԻԿԱՑՎԵՆ ՓՈԿԱՆ ԵՎ ԳԱՆՁԱՆ

*Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկա եւ Գանձա գյուղերը լրիվությամբ կգազիֆիկացվեն:*

*Մարտի 25-ին, Վրաստանի կառավարության հերթական նիստում, քննարկվեց կառավարության «Բնական գազով Վրաստանի բնակչության մատակարարման անհրաժեշտության միջոցառումների մասին» կարգադրությունը:*

*Ինչպես նշեց վարչապետը, բնական գազով կապահովվի 600 ընտանիք: «Դուք գիտեք, որ տարածաշրջանում կլիմայական ծանր պայմաններ են, ուստի գտնում ենք, որ այս նախաձեռնությունը կարեւոր նշանակություն ունի տեղի բնակիչների համար: Արդեն քննարկում ենք այդ նախագծի իրականացման նպատակով բյուջետային միջոցների հատկացման հարցը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

# ԿԱՆԽԱԳԾՎՈՒՄ Է ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄ

***Մի քանի ամիսների ընթացքում 45 տոկոսով արժեզրկված լարին վերջին մեկ շաբաթում ամրացավ գրեթե 5 տոկոսով: Ազգային տարադրամի կտրուկ ամրացումը փոխհակասող իրարանցում է առաջացրել մարդկանց շրջանում: Փոխանակման կետերում եւ բանկերում հերթեր են գոյանում դոլարի փոխանակման եւ լարիի ձեռքբերման համար: Փորձագետները չեն բացառում, որ առաջիկա օրերին լարին է՛լ ավելի կամրանա եւ, նրանց կանխագծումներով, դոլարի համեմատությամբ կհաստատվի լարիի ամենաիրատեսական կուրսը. մեկ դոլարի դիմաց՝ 2,20-2,25 լարի:***

Իրականում դժվար է կանխագծել, թե առաջիկայում ինչպես կփոխվի լարիի կուրսը: Թեպետ փորձագետների համոզմամբ, ազգային տարադրամի ամրացումը կշարունակվի: Փորձագետների պնդմամբ, հնարավորինս պետք է պահպանվի ներկայիս հավասարակշռությունը, ինչը տարածաշրջանում վրացական արտադրանքի մրցունակության յուրատեսակ երաշխիքն է, եւ ներկրող երկրները ամրացված լարիով մեծ օգուտ չեն կարողանա ստանալ:

Դեռեւս մարտի 7-ին մեկ դոլարի դիմաց 2,4716 լարիի փոխանակման կուրսը մեկ շաբաթում կտրուկ փոփոխության ենթարկվեց, ինչը լուրջ իրարանցում առաջացրեց ֆինանսական ոլորտում: Թեպետ հարկ է նշել, որ այդ իրարանցումն այս անգամ ուղղված էր դոլարի դեմ, քանի որ մարդիկ շուտափույթ կարգով սկսեցին մանրել դոլարը, ինչն էլ արագացրեց այդ միջազգային տարադրամի կուրսի կտրուկ նվազեցումը:

Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլու խոսքերով, լարիի կուրսը ամրանում է, ինչը հանգեցնելու է առեւտրական հարաբերությունների խրախուսմանը: Մեկնաբանելով Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներն այն մասին, որ, նախորդ տարվա համեմատությամբ, 2016 թվականի հունվար-փետրվար ամիսներին Վրաստանի արտաքին առեւտուրը նվազել է 2 տոկոսով՝ նախարարը նշեց, որ երբ անցյալ տարի առեւտրական բոլոր գործընկերների հետ ապրանքաշրջանառությունը նվազեց, Եվրամիության հետ, ընդհակառակը, այդ ցուցանիշը մեծացավ: «Ելնելով տարադրամի արժեզրկումից՝ Վրաստան ներկրվող, ինչպես նաեւ մեր երկրից արտահանվող ապրանքների ծավալները նվազեցին, թեպետ հուսով ենք, որ ներկայումս, ազգային տարադրամի կայունացման պայմաններում, յուրատեսակ ազդակ կտրվի դրանց ավելացմանը»,- հայտարարեց Քումսիշվիլին:

Փորձագետների հավաստմամբ, լարիի ամենաիրատեսական փոխարժեքը դոլարի նկատմամբ 2,20-ն է, եւ կառավարության կողմից ֆինանսական ճիշտ քաղաքականության իրականացման դեպքում, առանց քաղաքական ճնշումների կուրսի պահպանումը իրատեսական է:




Հատկանշական է, որ փորձագետները լարիի կուրսի կայունացման միտումը կապում են Ազգային բանկի նախագահի պաշտոնից Քադագիձեի պաշտոնաթողության հետ: Փորձագետների հավաստմամբ, Քադագիձեի հեռացմամբ, քաղաքական խուսանավումները վերացվեցին, եւ լարիի կուրսը աստիճանաբար մոտեցավ այն մեծությանը, որն առավել իրատեսական է: Թեպետ մյուս կողմից, լարիի կուրսի շարունակական ամրացումը եւս վտանգավոր է: Փորձագետների կարծիքով, դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքի հետագա նվազեցումը կարող է հանգեցնել ներկրողների կողմից սույն հանգամանքի շահարկման: Մասնավորապես, ներկրող կազմակերպությունները հեշտությամբ կարող են օգտվել տարածաշրջանի մյուս երկրներում ֆինանսական ոլորտում առկա իրավիճակից եւ, ներկրումների ծավալների մեծացման հաշվին, նշանակալից գումարներ ստանալ:

Կառավարությունում լարիի ամրացումը առնչում են ֆինանսական քաղաքականության հստակեցման հետ: Ֆինանսների նախարարությունում չեն բացառում, որ լարիի կուրսի ամրացման միտումի շարունակման դեպքում, Ազգային բանկը ձեռնամուխ կլինի արտասահմանյան տարադրամի՝ դոլարի գնումներին: «Բնականաբար, իշխանությունն ամեն ինչ անելու է կուրսի կայունացման միտումի պահպանման համար, թեպետ կտրուկ փոփոխություններն անցանկալի են, քանի որ դրանք կարող են հանգեցնել տնտեսական բարդությունների ծագման»,- ընդգծեցին ֆինանսների նախարարությունում:

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հույս ունի, որ լարիի կուրսը կայունանում է, եւ տատանումներ չեն լինի: Նրա խոսքերով, կուրսի կայունացման վրա ազդեցին արտաքին գործոնների փոփոխումները: «Տարածաշրջանում, այդ թվում՝ նավթ արտահանող երկրների էկոնոմիկայում նկատվել է առաջընթաց, իսկ դա նշանակում է, որ Վրաստանում օտարերկրյա տարադրամի հոսքը կմեծանա, ինչը կպայմանավորի լարիի ամրացումը: Մենք հետեւում ենք այդ գործընթացներին եւ հուսով ենք, որ լարին կկայունանա եւ տատանումներ չեն լինի»,- հայտարարեց Խադուրին ու հավելեց, որ լարիի թե՛ արժեզրկման եւ թե՛ ամրացման գործընթացի վրա ֆինանսների նախարարությունը ազդեցություն չի գործել:

Իր հերթին, Վրաստանի նախագահի տնտեսական հարցերով նոր խորհրդական Մայա Մելիքիձեն նշեց, որ վերջին ժամանակներում նկատված լարիի կուրսի կտրուկ ամրացումը պայմանավորված է երկրի էկոնոմիկայի դրական տեղաշարժերով: «Վերջին ժամանակների գործընթացները, որոնք տեղի են ունենում երկրում, ցույց տվեցին, որ Վրաստան մուտք են գործում ներդրումներ: Բացի այդ, 65 տոկոսով ավելացել են Իսրայելից կատարվող դրամական փոխանցումները, 15 տոկոսով ԱՄՆ-ից եւ 9 տոկոսով՝ Գերմանիայից: Կառավարությունը որոշակիորեն ընդգրկված է այդ գործընթացին, որպեսզի կայունացնի երկրի տնտեսական զարգացումը: Ներդրումների հոսքը աճում է, իսկ Ազգային բանկի ռազմավարությունը կայանում է նրանում, որպեսզի պահպանի այդ միտումը»,- հայտարարեց նա: Մայա Մելիքիձեի խոսքերով, լարիի կուրսի ամրացումից հետո, Ազգային բանկը գնել է 15 միլիոն դոլար, եւ դա ճիշտ որոշում էր, քանի որ տարադրամի արագ եւ չափազանցված ամրացումը բարվոք չէ Վրաստանի էկոնոմիկայի համար: «Պետք չէ առանձնակի ողջունել այն փաստը, որ տարադրամը հանկարծ արագ եւ անսպասելի սկսեց աճել, քանի որ այդ գործընթացը կարող է ունենալ նաեւ բացասական հետեւանքներ»,- հայտարարեց Մայա Մելիքիձեն:

Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա հունվարի 21-ից առանձնակի նկատելի դարձավ լարիի կուրսի տատանումը, ինչը պայմանավորված էր տնտեսական գործոնների ազդեցության ակտիվացման, թեպետ արդեն փետրվարի 15-ից սկսվեց լարիի կուրսի ամրացումը: Կարճ ժամանակահատվածում մեկ դոլարի դիմաց լարիի փոխարժեքը 2,50-ից նվազեց մինչեւ 2,36, եւ հատկանշական է, որ նվազեցումը շարունակվում է: Այդ նվազեցմանը նպաստեց նաեւ դոլարով տրվող վարկերի կտրուկ նվազումը, փոխանակման կետերում եւ բանկերում լարիի պահանջարկի մեծացումը: Մինչբանկյան տարադրամի շուկայում ծագեց դոլարի լրացուցիչ ծավալ, որն իր հերթին, նվազեցրեց միջազգային այդ տարադրամի փոխարժեքը: Տվյալ պարագայում, հարկ է նշել նաեւ Վրաստանի կառավարության ու Ազգային բանկի համաձայնեցված քաղաքականությունը, որն ուղղված էր ֆինանսական մասնավոր հատվածի իրավիճակի բարելավմանը: Այդ ամենի արդյունքում, մեծացել է սպառողական գների 3-5 տոկոսով նվազեցման հավանականությունը, թեպետ տվյալ պարագայում պետք է հաշվի առնել որոշակի պայմանավորվածություններ մինչեւ լարիի կուրսի ամրացումը ներկրումների հետ կապված պայմանավորվածությունների կատարման հարցում: Բոլոր դեպքերում, մոտ ժամանակները ցույց կտան, թե որքանով է իրատեսական լարիի կուրսի ամրացմանն ուղղված ներկայիս քաղաքականությունը:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ 1,1 ՄԻԼԻՈՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻՆ 20 ՏԱՐՎԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԵՆ



***Վրաստանում ավտոմեքենաների քանակը կտրուկ ավելանում է: 2015 թվականի վերջին Վրաստանում գրանցվել էր ավելի քան 1,1 միլիոն մեքենա, ինչը նշանակում է, որ Վրաստանի յուրաքանչյուր չորրորդ քաղաքացի, այսինքն՝ երկրի չափահաս բնակչության 40 տոկոսը, մեքենա ունի:***

Փորձագետները վերոնշյալ ցուցանիշը տագնապալից են համարում եւ կառավարությանը կոչ անում իրականացնել տրանսպորտային հստակեցված քաղաքականություն: Տրանսպորտի եւ ճանապարհների ասոցիացիայի ղեկավար Դավիթ Մեսխիշվիլու տեղեկատվությամբ, երկրի ողջ ավտոպարկի 60,9 տոկոսը կազմում են մարդատար մեքենաները, իսկ դրանց առյուծի բաժինը (90,9 տոկոս) թողարկվել է մինչեւ 2004 թվականը: Հատկանշական է, որ Վրաստանի ճանապարհներով երթեւեկող մեկ միլիոնից ավելի մեքենաների 40 տոկոսը Թբիլիսիում է:

Վիճակագրական տվյալներով, 2015 թվականին Վրաստան է բերվել 90 հազար ավտոմեքենա, որից 55 հազարը աջաղեկ էին: Այդ մեքենաների թիվը գրեթե այդքան էր նաեւ 2014 թվականին, թեպետ այն ժամանակ երկրում գրանցված էր 1 միլիոն 54 հազար մեքենա:

Հատկանշական է, որ ընդամենը չորս տարի առաջ Վրաստանում գրանցված էր 806 հազար ավտոմեքենա: Սկսած 2012 թվականից, գրանցվող մեքենաների թիվը սկսեց կտրուկ աճել: Այդ տարի գրանցվեց 8,2, իսկ հաջորդ տարի՝ 2013-ին՝ 9,1 տոկոսանոց աճ:

Գրանցվող ավտոմեքենաների թվի առանձնակի աճ գրանցվեց 2014 թվականին: Գրանցումը հիմնականում առնչվեց հին մեքենաներին: «Երկրում այսօր երթեւեկում է 400 հազարից ավելի 10-ից մինչեւ 20 տարեկան ավտոմեքենա, որոնք դժվար թե կարողանան անցնել տեխստուգումը: Ինչ վերաբերում է նոր ավտոմեքենաներին (0-ից մինչեւ 3 տարեկան), ապա դրանց թիվը 50 հազարից չի անցնում»,- հայտարարեց Մեսխիշվիլին: Նրա հավաստմամբ, մեքենաների ներկրումը հնարավոր է նվազեցնել միայն մաքսային համակարգի փոփոխմամբ: «Ներկրվող մեքենաների թիվը աղետալի մեծության է հասնում, երբ Հայաստանի ուղղությամբ արտահանում չի իրականացվում, իսկ Ադրբեջանում, սահմանված չափորոշիչների պատճառով, այնտեղ արտահանվող մեքենաների թիվը կտրուկ նվազել է, փաստորեն, ներկրված բոլոր մեքենաները մնում են երկրում: Հարցի կարգավորման համար հարկ է փոխել մաքսային համակարգը, նաեւ իրականում արգելել աջաղեկ մեքենաների ներկրումը, որը, ներկա դրությամբ, կազմում է 55 հազար մեքենա: Առաջիկա մի քանի ամսում իրավիճակը կարող է ճգնաժամային դառնալ, մեքենաները կսկսեն թանկանալ, ինչը լրացուցիչ դժվարություններ կստեղծի»,- պարզաբանեց Դավիթ Մեսխիշվիլին եւ հավելեց, որ արդեն այսօր իշխանությունները պետք է կտրուկ քայլեր ձեռնարկեն հասարակական տրանսպորտի զարգացման ուղղությամբ:

«Ավտոմեքենաների մեծ թվաքանակը չի նշանակում, որ երկրում տնտեսական վիճակը կարգավորվել է: Դա ճյուղի սխալ զարգացման հետեւանքն է, քանի որ այդ մեքենաների մեծ մասը նախատեսված է միայն նրա համար, որպեսզի մարդիկ կարողանան եկամտի որոշակի աղբյուր ունենալ»,- ընդգծեց Դավիթ Մեսխիշվիլին:

Թբիլիսիի սակրեբուլոյի անդամ Շալվա Օգբաիձեն ստեղծված իրավիճակից ելքը համարում է հիբրիդային շարժիչներով ավտոմեքենաների ներկրման խրախուսումը: Նրա հավաստմամբ, այդ հանգամանքը կբարելավի ոչ միայն տրանսպորտի ոլորտում ստեղծված իրավիճակը, այլեւ կնվազեցնի երկրի կախվածությունը նավթամթերքի ներկրումից եւ կբարելավի առեւտրական հաշվեկշիռը: «Մենք հաստատման ենք ներկայացրել մոտոցիկլետների եւ շարժիչներով հեծանիվների ներկրման մաքսատուրքի նվազեցման օրինանախագիծ: Միաժամանակ, ծագել է հին մեքենաների մաքսատուրքի պարտադիր ավելացման ու նոր մեքենաների մաքսատուրքի նվազեցման անհրաժեշտություն, ինչը հնարավորություն կտա նորացնել երկրում երթեւեկող մեքենաների ավտոպարկը: Օրինանախագիծը մշակվել է ՆԳ նախարարության կողմից եւ ներկայումս գտնվում է քննարկման փուլում»,- հայտարարեց Օգբաիձեն:

Նշենք, որ վերոնշյալ օրինանախագծի հաստատման դեպքում, 9-10 տարվա թողարկման ժամկետ ունեցող մեքենաների մաքսատուրքը կավելանա 25-30 տոկոսով, բնականաբար, նույնչափ կմեծանա նաեւ հին մեքենաների գինը: Իսկ ինչ վերաբերում է 3-ից մինչեւ վեց տարվա թողարկման մեքենաներին, ապա այդ հաշվով օրինանախագծում ծրագրված են նշանակալի արտոնություններ:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***